ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
10.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/27-7 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<20>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 10.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/27-7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 10.03.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	<<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4	ք. Երևան, Արամ Խաչատրյան 25, բն 12
ՀՎՀՀ 01508793	ՀՎՀՀ 08228471
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	h/h 2052822252211001
Հ/Հ 1150001612200100	<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Մ. Ադամյան	argus.solutionss@gmail.com
	093-99-99-89
	Ա. Հովհաննիսյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.